

ըրած էր իրեն Ս. Ժողովը նկատմամբ Լեհահայոց խնդրոյն, Ջուղայի հայ վաճառականներու խնդրանքին, Մովսէս կաթողիկոսի, Խաչատուր եպիսկոպոսի եւ Արիստակէս վարդապետի առաջարկութիւններուն եւ վերջապէս Միութեան հարցին: Ս. Ժողովը²³ իրաւամբ մտահոգուած էր անոր յաջորդի ընտրութեան մասին, որ կարենար յառաջ վարել խոհականութեամբ «Պարսկաստանի շատ կարեւոր առաքելութիւնը, մանաւանդ Հայոց կաթողիկոսին հետ Միութեան շուրջը սկսուած բանակցութիւնները»:

Դեռ Հոռոմ չէր հնչած Մովսէս կաթողիկոսի մահուան († 12 Մայիս 1633) գոյժը. առաջին անգամ Յովհ. Մովսէսի հաղորդագրութենէն վերահասու եղեւ Ս. Ժողովը այս մասին. 1633 Հոկտ. 8ին առ Մովսէս պատասխանին մէջ այսպէս կը յայտնէ Ս. Ժողովը իւր ցաւակցութիւնը. «Ս. Ժողովս մեծ ցաւով լսեց Ձեր նամակէն Հայոց Մովսէս կաթողիկոսի մահը. որովհետեւ անիկա այնքան մէտ էր սուրբ Միութեան, որ իւր առ Նորին Սրբութիւն գրած թղթին մէջ ոչ միայն նշուած էր զԵւտիքէս, այլ եւ կերպով իւրիք դաւանած էր ի Քրիստոս երկու բնութիւն»:

Փիլիպպոս կաթողիկոս, որ յաջորդեց Մովսէսի, թէեւ չարունակեց թղթակցութիւնները Ս. Աթոռի հետ, բայց նոյնքան ոգեւորութեամբ չհետապնդեց Միութեան հարցը:

²³ Prop. Lettere volgari, an. 1633, vol. 13, f. 107.